ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/158

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Յունիքիմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Յունիքիմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Գրիգորյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով բաց մրցույթ, շարժիչի յուղերի, հատուկ հեղուկների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9651-2021 գրությամբ «Յունիքիմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 30.04.2021թ. թիվ 01-03/227-21 գրության հիման վրա, 15.06.2021թ.-ին «Յունիքիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 15.06.2021թ.-ին:

16.06.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/158 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

24.06.2021թ.-ին և 02.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.07.2021թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 08.06.2021թ.-ի թիվ ՊՆ/02/3009-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Յունիքիմ» և «Մոսէսքո» ՍՊ ընկերությունները (այսուհետ՝ Մասնակիցներ): Մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում առկա էր անհամապատասխանություններ: 2021թ. մայիսի 27-ին Մասնակիցներին ծանուցվել է տեխնիկական բնութագրերի շտկման վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չեն շտկել արձանագրված

անհամապատասխանությունները, ուստի 01.06.2021թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է «Յունիքիմ» ՍՊ և 1-ին չափաբաժնի մասով «Մոսէքսը» ՍՊ ընկերությունների հայտերը:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են Մասնակիցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Յունիքիմ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Յունիքիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 16.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Յունիքիմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9651-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Մասնակիցը, 18.06.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի մայիսի 24-ին Յունիքիմ ՍՊ ընկերությունը armeps համակարգի միջոցով մասնակցել է Պաշտպանության նախարարության կողմից հայտարարված շարժիչի յուղերի, հատուկ հեղուկների ձեռքբերման բաց մրցույթի 2-րդ չափաբաժնին:

2	Հակասառիչ հեղուկ /Տոսոլ Ա-40/	ԳOUS 28084-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ - թափանցիկ միասեռ գունավորված հեղուկ առանց մեխ խառնուրդների - խտությունը՝ 1,065-ից մինչև 1,085 գ/սմ^3 - բյուրեղացման սկզբի ջերմաստիճանը՝ մինուս 40^{0}C-ից ոչ բարձր, - ռետինե ուռչումը՝ 5%-ից ոչ ավելի, - ջրածնային ցուցիչը (pH)՝ 7,5-ից մինչև 11,0, - թորման սկիզբը ոչ ցածր 100^{0}C, - մինչև 150^{0}C թորվում է ոչ ավել ծավալի 50%-ը: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով

Տեղեկացնում ենք նաև, որ սույն թվականի մայիսի 27-ին ժամը 11.00 տեղի է ունեցել ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը և վերոնշյալ նիստի N 3 Արձանագրության 3.3 կետի համաձայն մայիսի 27-ին ժամը 14:40 info@armeps.am էլ. փոստից info@unichemllc.com էլ. փոստին ստացվել է նամակ անհամապատասխանության շտկման պահանջով , մասնավորապես՝ « - Ձեր կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «ԳOUS 28084-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ», այնինչ պետք է ներկայացվեր ԳOUS կամ որևէ ՏՊ, առանց կամ համարժեքի: Եթե ներկայացվելու է որևէ ՏՊ, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի /ՏՊ/ կրկնօրինակը»: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և Յունիքիմ ՍՊԸ առաջարկել ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները՝ պահանջելով շտկված տարբերակը ուղարկել a.grigoryan@mil.am էլ.փոստին: (Փաստաթղթերը կցվում են)

Սույն թվականի մայիսի 27-ին ժամը 14:53 համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում info@unichemllc.com էլ. փոստից a.grigoryan@mil.am էլ.փոստին ուղարկվել է նամակ համապատասխան շտկմամբ: info@unichemllc.com էլ. փոստին մայիսի 27-ին ժամը 14:54 ստացվել է համապատասխան ծրագրային պատասխան նամակ ծանուցում a.grigoryan@mil.am էլ.փոստին մեր ուղարկված նամակի բարեհաջող տեղ հասնելու վերաբերյալ: (կից ներկայացվում է նամակի ընթացքի հետ կապված info@unichemllc.com էլ փոստից արտատպված բնօրինակ փաստաթղթերը):

Սույն թվականի հունիսի 01-ին ժամը 16:51 Յունիքիմ ՍՊԸ էլ հասցեին ուղարկվում է ծանուցում, որ մեր հայտը մերժվել է՝ կից ներկայացնելով գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. N 4 արձանագրությունը, որի 1.1 կետով արձանագրվել է, որ Յունիքիմ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Արձանագրությունը ստանալուց հետո անմիջապես կապ ենք հաստատել գնումները համակարգող՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի պետ Ա. Գրիգորյանի հետ, սակայն վերջինիս կողմից ստացել ենք պատասխան, որ 27.05.2021թ. մեր կողմից նամակ չի ստացել: Մեր կողմից անմիջապես կրկնակի ուղարկվեց (forward արվեց) այդ ամսաթվով մեր ուղարկած նամակը և իր էլ. հասցեին հասնելու վերաբերյալ ծրագրային ստացականը, սակայն նամակը նախկինում չստանալու վերաբերյալ պատասխանը չփոփոխվեց և առաջարկվեց բողոքարկել սահմանված կարգով:

Յանկանում ենք նշել, որ Յունիքիմ ՍՊ ընկերությունը առաջին անգամ չէ, որ մասնակցում է պետական տենդերներին, այդ թվում Պաշտպանության Նախարարության և նամակագրության համար միշտ օգտագործել է info@unichemllc.com էլ. հասցեն: Մինչ այժմ էլ հասցեի հետ կապված խնդիրներ գործընկերների կողմից չեն արձանագրվել:

Հայտնում ենք Ձեզ, որ 02.06.2021 թ. ՀՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի (mulberry2@minfin.am) միջոցով սահմանված կարգով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք վերոնկարագրվածի հետ կապված և, ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով, խնդրել ենք պարտավորեցնել թիվ ՀՀ ՊՆ- ԲՄԱՊՁԲ-21-7/7 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխելու 01.06.2021թ. N 4 Արձանագրության 1.1 կետով Յունիքիմ ՍՊ ընկերության հայտը մերժելու որոշումը և հայտը գնահատել բավարար:

Սույն թվականի հունիսի 11-ին ժամը 09:53-ին Յունիքիմ ՍՊԸ կողմից ներկայացված բողոքի (բողոքի ծածկագիրը՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/38) քննության նպատակով հրավիրված նիստի ընթացքում Յունիքիմ ՍՊԸ ներկայացուցիչ Անի Գրիգորյանի կողմից ներկայացվել են ապացույցներ (info@unichemllc.com էլ. փոստից a.grigoryan@mil.am ուղարկված նամակի արտատպված տարբերակը, a.grigoryan@mil.am էլ.փոստին մեր ուղարկված նամակի բարեհաջող տեղ հասնելու վերաբերյալ ծրագրային պատասխան նամակի արտատպված տարբերակը), որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի Յունիքիմ

ՍՊԸ ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ շտկված տարբերակը ներկայացվել է գնումները համակարգող՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի պետ Ա. Գրիգորյանի (a.grigoryan@mil.am) էլ.փոստին: Մեր կողմից հայտնել ենք նաև պատրաստակամություն անհրաժեշտության դեպքում տրամադրել մուտք մեր էլեկտրոնային համակարգ վերոնշյալ արտապված տարբերակների իսկությունը հաստատելու համար: Նիստի արդյունքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ պարոն Գրիգոր Ներսիսյանի կողմից Յունիքիմ ՍՊԸ տրվել է 10 աշխատանքային օր ժամկետ դիմելու անկախ փորձագիտական ընկերության և ներկայացնելու նրանց եզրակացությունը վերոնշյալ ապացույցների հետ կապված:

Յանկանում ենք տեղեկացնել, որ մենք արդեն իսկ դիմել ենք անկախ փորձագիտական ընկերության՝ տրամադրելով փորձաքննության համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը և մուտքը մեր էլեկտրոնային համակարգ: Փորձագիտական եզրակացությունը ստանալուց հետո մենք անմիջապես կներկայացնենք Ձեզ:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Յունիքիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-LO-2021/158 ծածկագրով ընթացակարգը:

«Յունիքիմ» ՍՊԸ-ն 21.06.2021թ.-ին թիվ 072/21 գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել է «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված փորձագետի 21.06.2021թ.-ի թիվ 11722106 եզրակացությունը:

4. <u>ՍՑ-LO-2021/158 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շարժիչի յուղերի, հատուկ հեղուկների ձեռքբերման նպատակով 12.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Յունիքիմ» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.05.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.3-րդ կետի համաձայն՝ «Յունիքիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «ԳՕՍՏ 28084-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ», այնինչ՝ պետք է ներկայացվեր ԳՕՍՏ կամ որևէ ՏՊ, առանց կամ համարժեքի: Եթե ներկայացվելու է որևէ ՏՊ, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի /ՏՊ/ կրկնօրինակը:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գմահատման նիստը և ծանուցել Մասնակցին, առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 27.05.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի info@unichemllc.com էլ. փոստի հասցեին է ուղարկել անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում:

vi. Հանձնաժողովի 01.07.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Յունիքիմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, 01.06.2021թ.-ին որոշել է վերջինիս հայտը մերժել:

vii. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.06.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/38 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով «Յունիքիմ» ՍՊԸ-ի՝ 08.06.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության՝ 10.06.2021թ. գրությամբ ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ 21.06.2021թ.-ի թիվ 11722106 փորձագետի եզրակացությունը և գործում առկա փաստաթղթերը, արձանագրել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 41-րդ կետի համաձայն, էլեկտրոնային եղանակով 27.05.2021թ.-ին ծանուցել է Մասնակցի՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ ներկայացված ապրանքի

տեխնիկական բնութագրում նշված է «ԳՕՍՏ 28084-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ», այնինչ պետք է ներկայացվեր ԳՕՍՏ կամ որևէ ՏՊ, առանց կամ համարժեքի: Հիմք ընդունելով թիվ 11722106 փորձագետի եզրակացությունը՝ արձանագրվել է, որ Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է հայտի թիվ 1.1 հավելվածում արձանագրված անհամապատասխանությունը՝ 27.05.2021թ.-ին info@unichemllc.com էլեկտրոնային փոստի հասցեից a.grigoryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով ապրանքի տեխնիկական բնութագրում միայն նշված «ԳՕՍՏ 28084-89»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9651-2021 գրությամբ «Յունիքիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-

ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շարժիչի յուղերի, հատուկ հեղուկների ձեռքբերման նպատակով 12.04.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 27.05.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.3-րդ կետով արձանագրվել է, որ համաձայն՝ «Յունիքիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «ԳՕՍՏ 28084-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ», այնինչ՝ պետք է ներկայացվեր ԳՕՍՏ կամ որևէ ՏՊ, առանց կամ համարժեքի: Եթե ներկայացվելու է որևէ ՏՊ, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի /ՏՊ/ կրկնօրինակը, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գմահատման նիստը և ծանուցել Մասնակցին, առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 27.05.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի info@unichemllc.com էլ. փոստի հասցեին է ուղարկել անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում: Սակայն Հանձնաժողովի 01.07.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Յունիքիմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված, որոշում է կայացվել վերջինիս հայտը մերժել:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.06.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/38 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով «Յունիքիմ» ՍՊԸ-ի՝ 08.06.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության՝ 10.06.2021թ. գրությամբ ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

21.06.2021թ.-ի թիվ 11722106 փորձագետի եզրակացությունը և գործում առկա փաստաթղթերը, արձանագրել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 41-րդ կետի համաձայն, էլեկտրոնային եղանակով 27.05.2021թ.-ին ծանուցել է Մասնակցի՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «ԳՕՍՏ 28084-89 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ», այնինչ պետք է ներկայացվեր ԳՕՍՏ կամ որևէ ՏՊ, առանց կամ համարժեքի: Հիմք ընդունելով թիվ 11722106 փորձագետի եզրակացությունը՝ արձանագրվել է, որ Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է հայտի թիվ 1.1 հավելվածում արձանագրված անհամապատասխանությունը՝ 27.05.2021թ.-ին info@unichemllc.com էլեկտրոնային փոստի հասցեից a.grigoryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով ապրանքի տեխնիկական բնութագրում միայն նշված «ԳՕՍՏ 28084-89»:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի

որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավրություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.06.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/38 ծածկագրով կայացրած որոշմամբ հաստատված հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում, գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Ավելին՝ Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ... գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.06.2021թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/38 ծածկագրով կայացրած իրավապարտադիր ուժ ունեցող որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ Հանձնաժողովի 01.06.2021թ.-ի թիվ 4 արձանագրության 1.1 կետով «Յունիքիմ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումն իրավաչափ չէ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Յունիքիմ» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9651-2021 գրությամբ «Յունիքիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/158 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**